



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **ՀՈՒՆՎՈՒՄԻ Ա. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ա. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ՕԾՈՒՄ**

Ա. Կարապետ Մայր Եկեղեցւոյ մեծ ընտանիքին համար տօնակաւ օր մը եղաւ Կիրակի, 17 Հոկտեմբեր 2010ը: Հակառակ կլիմայի աննպաստ պայմաններուն, եկեղեցին լեցուն էր հաւատացեալներու խումներամ բազմութեամբ:

Եպիսկոպոսական հանդիսաւոր Ա. Եւ անմահ Պատարագը մատոյց Թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, իրեն առընթերակայ Եւ Ա. Սեդանին սպասարկող ունենալով եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Վիգէն Ա. Բնիյ. Վասիլեանը: Յընթացս Ա. Պատարագին Եւ քարոզէն առաջ, «Չորս ըստ պատկերի քում ստեղծեր» շարականի երգեցողութեամբ՝ Առաջնորդ Սրբազան Հայրը թափօրով բեմէն ատեան առաջնորդուեցաւ Եւ ատեանի առջեւ դրուած Ա. Սահակ Պարթեւ Հայրապետի Եւ Ա. Մեսրոպ Մաշտոցի երկու մեծ սրբապատկերները, ինչպէս նաեւ յաջորդաբար Ա. Յակոբ Մծբնացի Հայրապետի, Ա. Ստեփանոս Սարկաւազի, մեր Տէր Յիսուս Զրիստոսի Եւ Ա. Յովհաննէս Մկրտիչի փոքր պատկերները օծեց: Հոգեւոր խանդավառութիւն կը տիրէր բոլոր հաւատացեալներու սրտին մէջ, մանաւանդ սրբապատկերներու նուիրատուներուն՝ Տէր Եւ Տիկին Մեսրոպ Եւ Անահիտ Աբրահամեաններուն, Տէր Եւ Տիկին Սահակ Եւ Լուսինէ Մանուէլեաններուն ու Տէր Եւ Տիկին Մայք Եւ Վարդուկ Վանլեաններուն, որոնք ներկայ էին արարողութեան: Սրբանկարներու բարերարներէն է նաեւ Թանիա Փափագեան:

Իր քարոզին մէջ, Առաջնորդ Սրբազան Հայրը, անդրադառնալով Մշակոյթի Ամսուան ընթացքին Ա. Սահակ Պարթեւ Եւ Ա. Մեսրոպ Մաշտոցի պատկերներու օծման, ըսաւ. «Անոնք մեր ժողովուրդի զաւակները առաջնորդեցին Եւ մեր ազգը հիմնաւորեցին: Հայ ժողովուրդը հոգեպէս զինեցին հայ գրականութեան թարգմանութեամբ: Այս պատկերներու ընդմէջէն սուրբերու բարեխօսութիւնը պիտի խնդրենք, որպէսզի մեր խնդրանքները արագ հասնին Աստուծոյ»:

Սրբազան Հայրը, ակնարկելով օրուան Աւետարանի ընթերցումին, ուր Յիսուս կը մէջբերէր Եսայի Մարգարէի խօսքը՝ «Տիրոջ Հոգին վրաս է. որովհետեւ օծեց զիս Եւ դրկեց՝ աղքատներուն փրկութեան աւետիս տալու, սրտաբեկները մխիթարելու, աւետելու՝ թէ գերիները պիտի ազատագրուին,

կոյրերուն աչքերը պիտի բացուին, հարստահարուածները պիտի ազատին. եւ յայտարարելու թէ ահա հասած է ժամանակը երբ Տէրը պիտի փրկէ իր ժողովուրդը», մաղթեց որ Տիրոջ հոգին մեզի հետ ըլլայ: Ան ըսաւ. «Աստուած արեւը կը ծագեցնէ արդարներուն եւ մեղաւորներուն եւ կը համբերէ մինչեւ բոլորը Աստուծոյ փրկութեան անտիսը լսեն եւ Աստուծոյ դարձի գան»: Առաջնորդ Սրբազան հայրը նաեւ օրհնեց նուիատունները:

Յաւարտ Ս. Պատարագի, տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն, ապա Առաջնորդ Սրբազան Հայրը թափօրով ուղղուեցաւ եկեղեցւոյ գաւիթը, ուր երգուեցաւ «Կիլիկիա» մաղթերգը:

## **PRELATE CELEBRATES DIVINE LITURGY AND CONSECRATES SACRED PAINTINGS AT ST. GARABED CHURCH**

On Sunday, October 17<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and consecrated sacred paintings at St. Garabed Church in Hollywood. Parish Pastor Archpriest Fr. Vicken Vassilian assisted at the altar.

Prior to the sermon and accompanied by the singing of a hymn, the Prelate was led down the altar to consecrate two large paintings of St. Sahag Barhev, and St. Mesrob Mashdots, and smaller painting of St. James of Nisibis, St. Stephen the Proto-Martyr, our Lord Jesus Christ, and St. John the Baptist. Among the hundreds of faithful in attendance were the sponsors of the paintings Mr. and Mrs. Mesrob and Anahid Aprahamian, Mr. and Mrs. Sahag and Lucine Manuelian, and Mr. and Mrs. Mike and Vartoug Vanlian. The fourth sponsor, Ms. Tania Papazian was not in attendance.

Noting that the paintings of St. Sahag and St. Mesrob were fittingly being consecrated during Armenian Culture Month, the Prelate exalted their invaluable contributions to enriching our culture and heritage, and urged the faithful to pray for their intercession through these paintings. Following the sermon, the Prelate blessed the sponsors.

At the conclusion of the Divine Liturgy and requiem, the Prelate was led in a procession to the entrance of the church where the Cilician anthem was collectively sung.